



**ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊՍ.
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Աստուածային օրհնությանն ներքե կ'ապրի ու կը գոյատևէ Հայաստան-եայց եկեղեցին, իր ապահով հովանիին տակ պահելով հայ հաւատացեալ ժողովուրդը, ովաւապահ ու նուիրեալ առաջնորդութեամբ մեր հոգեւորականութեան:

Այսօր Ձերդ Սրբազնութիւնը կը հանդիսանայ հայ եկեղեցոյ ճշմարտապէս անձնուէր ու ներշնչեալ բարձրաստիճան հոգեւոր սպասաւորներէն մին, որ կոչուած էք ամերիկահայոց թեմի առաջնորդութեան, շրջապատուած Ձեր հոգեւորականաց դասուն, թեմական-եկեղեցական իշխանութեանց եւ հաւատացեալ ժողովրդեան սիրով ու գնահատանքով:

Բարձր է Ձեր կոչումը, նուիրական Ձեր գործը, մեծ է Ձեր պատասխանատւութիւնը: Տիրոջ ողորմութիւնը սակայն անբաւ է եւ սուրբ Հոգւոյն զօրութիւնը ամենաչաղօ: Այդ ողորմութիւնն ու զօրութիւնը պիտի ըլլան Ձեզի ապաւեն ու զօրավիգ, եւ Դուք պիտի տանիք Ձեր լուծը ոչ միայն քաղցրութեամբ, այլ եւ հետզհետէ առաւել արդիւնաւետութեամբ:

Մեզի յայտնի էր արդէն, բայց այժմ անելի համոզուեցանք, թէ Ձեր Սրբազնութիւնը իբրեւ նորընտիր առաջնորդ կը գտնուիք իրապէս Աստուծոյ եւ Մեր ազգին ծառայելու ուղիղ ճամփուն վրա, անհաճանք կորովով, բարեջան հեղինակութեամբ ու պայծառ տեսիլքներով:

Մենք, իբրեւ Հայոց Հայրապետ, ուրախ ենք, գոհ ենք, մխիթարուած ենք: Որով իբրեւ արդար արտայայտութիւն Մեր այս զգացումներուն, Ձեզի կը շնորհենք, սիրելի Սրբազան, արքութեան պատիւ, աղօթքով որ ս. Հոգին մնա Ձեզի ներշնչարան, եւ Դուք Ձեր հոգեւոր իշխանութեան յիշատակով շարունակէք Ձեր առաքելութիւնը, անշէշ ու անաղարտ պահելով սուրբ հաւատքը եւ հայկական հոգին Ձեզի ապաւինած մեր ժողովուրդին:

Սուրբ Անետարանով լուսատրեցէք Ձեր եկեղեցիները, առաջնորդեցէք մեր ժողովուրդը, մխիթարեցէք անոնց հոգիները, փառաւորելով սուրբ Էջմիածինը եւ ուրախացնելով Մեզ: Լիակատար յաջողութիւն Ձեզի:

«Եւ յոյսն մեր հաստատունն է վասն ձեր, քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ ենք չարչարանացն՝ նոյնպէս և մխիթարութեանն» (Բ Կորնթ. Ա. 7), «Ամենայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14), ամէն:

Վաչագհ Բ

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տնում կոնդակս ի 14-ն ապրիլի
1968 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԺԷ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 636